

ՄԵՐ ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐԸ

ԱԼԲԵՐՏ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՏԵՓԱՆՅԱՆ



Բոլորեց Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Ստեփանյանի ծննդյան 70 և գիտամանկավարժական գործունեության 45-ամյակը: Պրոֆեսոր Ստեփանյանը խորը և բազմակողմանի գիտելիքների ու լայն մտահորիզոնի տեր անձնավորություն է և մեծ հեղինակություն է վայելում արդի պատմագիտության մեջ:

Ա. Ստեփանյանը ծնվել է 1948 թ. մարտի 14-ին Երևանում: 1965 թ. ավարտել է Երևանի Նիկոլայ Գոգոլի անվան թիվ 35 դպրոցը և ընդունվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետ: 1969 թ. ավարտել է նույն ինստիտուտը և ընդունվել Սանկտ Պետերբուրգի (Լենինգրադի) պետական համալսարանի ասպիրանտուրա՝ «Հին Հունաստանի և Հռոմի պատմություն» մասնագիտացմամբ: Այստեղ մասնագիտացել է անտիկ պատմության, բանասիրության և իմաստասիրության մեջ, ուսումնասիրել հին լեզուներ՝ լատիներեն, հին հունարեն, աքքադերեն: Գիտամանկավարժական գործունեությունն սկսել է 1974 թ. Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում՝ իբրև Ընդհանուր պատմության ամբիոնի ավագ դասախոս, ապա՝ դոցենտ: 1975 թ. ՀԽՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հայաստանի և Պարթևստանի պայքարը Հռոմի դեմ և Հռանդեայի դաշնագիրը» թեմայով՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Համատեղության կարգով տարբեր տարիներին աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտում՝ իբրև ավագ գիտաշխատող, Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոնում՝ իբրև Մշակութաբանական հետազոտությունների բաժնի վարիչ, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանում՝ իբրև ռեկտորի խորհրդական: ՀԽՍՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Պատմական մտքի զարգացումը Հին Հայաստանում. առասպել, ռացիոնալիզմ, պատմագրություն» թեմայով՝ 1992 թ. ստանալով պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1991 թվականից աշխատում է ԵՊՀ Համաշխարհային պատմության ամբիոնում նախ՝ իբրև դոցենտ, ապա՝ պրոֆեսոր:

Ալբերտ Ստեփանյանն անցել է Լենինգրադյան պատմագիտական միջավայրի բովոյ, ինչը դրսևորվում է նրա և՛ գիտական, և՛ ուսումնական աշխատանքներում: Պրոֆ. Ա. Ստեփանյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը բավական լայն է և ընդգրկում է համաշխարհային պատմության տարբեր ոլորտներ՝ անտիկ պատմություն ու

իմաստասիրություն, հայոց պատմություն, պատմագիտական միտք, պատմության տեսություն, քաղաքակրթությունների տեսություն և այլն: Նա բազմիցս նշել է հայկական պատմագիտության մեջ պատմության դրապաշտական ընկալումը հաղթահարելու, պատմագիտական նոր հարացույցեր, հետազոտական նոր մոտեցումներ ներբերելու, հայոց պատմությունը համաշխարհային պատմություն «վերադարձնելու» մարտահրավերի մասին, և նրա գիտական, մանկավարժական գործունեությունը՝ թե՛ իբրև դասախոսի, թե՛ իբրև ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի վարիչի, դրա խոսուն վկան է:

1999 թ. հունիսից առաջօր Ա. Ստեփանյանը ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի վարիչն է, որտեղ արդյունավետ ուսումնագիտական աշխատանքներ են կատարվում: Տարիներ շարունակ դասավանդելով Պատմության ֆակուլտետում՝ նա իր գիտելիքներն ու իմացությունն անմնացորդ նվիրումով հաղորդում է ուսանողներին՝ հոգածությամբ նպաստելով գիտական կադրերի պատրաստմանը: Նրա սաներից շատերն աշխատում են հանրապետության գիտակրթական և մշակութային բազմաբնույթ ոլորտներում՝ հպարտությամբ ընդգծելով, որ «ստեփանյանական դպրոցով» են անցել:

Ա. Ստեփանյանի գիտամանկավարժական գործունեության առանձնահատուկ բնագավառ է մասնակցությունը պատմության դասագրքերի ստեղծման գործին: Նա հանրակրթական դպրոցի համաշխարհային պատմության երեք դասագրքերի («Հին աշխարհի պատմություն», «Նոր դարերի պատմություն», «Նորագույն պատմություն»՝ հրատարակված 2007, 2008, 2013, 2014 թվականներին) հեղինակներից է:

Պրոֆ. Ա. Ստեփանյանը մասնակցել է բազմաթիվ միջազգային գիտաժողովների՝ հանդես գալով զեկույցներով ու հաղորդումներով, ինչպես նաև դասախոսություններով, որոնք արժանացել են առանձնահատուկ ուշադրության՝ Երևան, Մոսկվա, Պրահա, Կոպենհագեն, Վարշավա, Թեսալոնիկի, Վիեննա, Հռոմ, Ժնև, Բոստոն, Անն-Արբոր (1993 թ. Ավստրիա՝ Վիեննա, Գաֆլենց, 1995 թ. Ֆրանսիա՝ Մոնպելյե, 1995 թ. Հունաստան՝ Աթենք, Թեսալոնիկի, 1998 թ. Իտալիա՝ Հռոմ, 2002 թ. ԱՄՆ՝ Բոստոն, 2004 թ. Շվեյցարիա՝ Ժնև, 2005 թ. Լեհաստան՝ Վարշավա, 2010 թ. Ֆրանսիա՝ Փարիզ, 2009 թ. ԱՄՆ՝ Անն-Արբոր (Միչիգան)):

2013 թվականից Ա. Ստեփանյանը գլխավորում է «Համաշխարհային պատմության հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, որը սերտորեն համագործակցում է ամբիոնի հետ համատեղ կազմակերպվող գիտակրթական տարբեր միջոցառումների շրջանակում՝ օժանդակելով ամբիոնի ուսանողների ներգրավմանը մասնագիտական տարբեր միջոցառումներում: Վերջին երեք տարիների ընթացքում նրա ղեկավարությամբ Համաշխարհային պատմության հայկական ասոցիացիան ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի մասնակցությամբ կազմակերպել է միջազգային երկու գիտաժողով՝ ԱՄՆ-ի և ՄԲ-ի դեսպանատների աջակցությամբ: Նրա հրավերով ամբիոնում դասախոսություններով պարբերաբար հանդես են գալիս արտասահմանյան լավագույն բուհերի նշանավոր գիտնականներ: Արդեն հինգերորդ տարին է, ինչ պրոֆ. Ստեփանյանի ղեկավարությամբ ամբիոնում կազմակերպվում է երիտասարդ գիտաշխատողների և ուսանողների միջբուհական գիտաժողով, ուր արծարծվում են հայոց և համաշխարհային պատմության տարաբնույթ խնդիրներ:

Դասախոսական աշխատանքին զուգահեռ նա զբաղվում է նաև գիտահետազոտական աշխատանքով: Նրա հեղինակությամբ և համահեղինակությամբ լույս են տեսել 100-ից ավելի գիտական աշխատանքներ՝ մենագրություններ, գիտական հոդվածներ, թարգմանություններ, զեկույցների դրույթներ և այլն: Դրանք հրատարակվել են ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, իտալերեն լեզուներով:

1991 թ. հրատարակել է «*Развитие исторической мысли в древней Армении. Миф, рационализм, историописание*» մենագրությունը, 1999 թ.՝ «Պլուտինոս, Հաղագս բանականի, թարգմ. հին հունարեն բնագրից, ուսումնասիրություն, մեկնություններ» աշխատությունը: 2012 թ. լույս տեսավ նրա «Պատմության կերպավորությունները Մեծ Հայքում. Արտաշիսյան դարաշրջան, գիրք Ա» մենագրությունը: Հեղինակն իր մեկ-մե-

նագրային հարթության մեջ պարառում է մեկ-բազմագրային տեքստը: Յուրաքանչյուր գլուխ (նույնիսկ յուրքանչյուր ենթագլուխ) ինքնուրույն միավոր է, որը միևնույն ժամանակ մեկ-բազմագրային կամ մեկ-բազմախոսական ամբողջություն է կազմում հեղինակի լայնախոհ հայացքի ներքո: 2014 թ. լույս տեսավ «Պատմության հետազիծը: գործք, գրույթ, իմաստ» մենագրությունը, որը հեղինակի՝ տարբեր տարիներին գրված հոդվածների ժողովածու է: Պատկանելով հատվածային մենագրության ժանրին՝ աշխատությունը նվիրված է հին հունական, հելլենիստական և հայոց քաղաքակրթական ինքնության տարաբնույթ հիմնախնդիրներին:

Պրոֆ. Ստեփանյանի խմբագրությամբ հրատարակվել են «Ինքնության հարցեր», «Պատմություն և կրթություն» (1-2, 3-4), «Պատմության հարցեր-1, 2, 3, 4 (5-րդ հատորն այժմ տպարանում է), «Անհատը պատմության հոլովույթում» ժողովածուները, որտեղ հրատարակվելու հնարավորություն ունեն ինչպես ամբիոնի դասախոսները, այնպես էլ շնորհալի ուսանողները:

Պրոֆ. Ստեփանյանի աշխատություններն ընդլայնում են պատմագիտության ավանդական սահմանները: Մեկնարկելով արիստոտելյան եզրաբանությունից՝ նա խոսում է «պատմության պոետիկայի» մասին. պատմությունն ուսումնասիրում է ոչ միայն այն, ինչ եղել է, այլ նաև այն, ինչ կարող էր լինել: Ուստի արհեստավարժ պատմագետը սոսկ փաստագիր չէ, այլ անցյալի հեռանկարի կազմակերպիչ, որը լծորդում է անցյալի, ներկայի և ապագայի տեսանելի հեռանկարները:

2017 թ. սեպտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առթիվ երկարամյա բարեխիղճ և արդյունավետ աշխատանքի համար Ա. Ստեփանյանը Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանով պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով:

Պրոֆ. Ստեփանյանի աշխատությունները ոչ միայն հետազոտություններ են, այլև բազում հետազոտությունների հնարավորություններ, քանզի պարունակում են հարցադրումներ, որոնց քննությունը հետազոտական նոր հորիզոններ է բացում պատմագետների ոչ մեկ սերնդի համար:

Սրտանց շնորհավորում ենք պրոֆ. Ստեփանյանի ծննդյան 70-ամյա հոբելյանը, ցանկանում նրան քաջառողջություն և գիտական բեղուն գործունեություն:

Լիլիթ Մինասյան
Սմբատ Հովաննիսյան
Զուլիետա Կճանյան